

“Համասնունդ եղբայր, կը կոչէ “ամենայն Հայոց Գե-  
րապատիւ Ս. քահանայապետը, եւ ի միջի այլոց, անոր  
անուան ալ կը նուիրէ Սկիթի Աստուածաբանին  
հատորը: Աբրահամ, “էր այր առաքինի եւ  
ձգնազգեաց հեզ եւ բարեբարոյ, աղօթասէր եւ  
տօնակատար, (Ջամբու էջ 29. 85), հմուտ հին եւ  
նոր կտակարանաց եւ աստուածաբանական Ս. գրոց,  
(Դրախոր ցանկաւ. էջ 611). կուտ եւ Շղթայակիր  
ընտրել տուին Աբրահամը, որպէս զի արդէն,  
“Համասնունդ” իրենց՝ ըլլայ նաեւ համամիտ եւ  
երեք Աթոռներու վրայ զիրար հասկնան:

Սիմէոն՝ եթէ անաշառ պատմագիր ոգիով  
գիտէր “յայնկոյս”ն ու “Սիս”ը, անշուշտ, ինքնին  
պիտի սրբագրէր իր Ջամբուին շատ մը էջերը, ուր  
ի միջի այլոց ձրի գրիչ շարժած է կ. Պոլսոյ  
մեծագործ Պատրիարքին դէմ, անոր բարձր եւ  
ընտիր յատկութիւնները, որոնց ուրացումը,  
անհնար պիտի ըլլար իրեն, գէշ մեկնելով:՝

### ԿՈՂՈՏԻ ԱԹԱԿԵՐՏՆԵՐԸ

Ի՛նչպէս կուտի մատենագրական կեանքը  
արդեամբ արժէքընելու համար ուղղակի իր գրչէն

1 Սիմոն կթղ. իր երիտասարդութեան ժամանակ  
բացառիկ կերպով կը զարգանայ Էջմիածնի մէջ եւ իր  
համբաւը կանուխէն կը տարածուի ամէն կողմ:

Կուտ, որ ամէնէն ուշիմ եւ ամէնէն յարմար աշա-  
կերաներով կը զօրացընէր իր դասատունը, կը փափաքէ Սիմոն-  
ներն ալ իր քովը տեսնել: Կուտի “Համասնունդ” եղբայրը,  
Մշեցի Աբրահամ Բ. կաթողիկոս, թոյլ չի տար, որ այդ-  
պիսի քաջ մը հեռանայ Ս. Աթոռէն: Ա. Երիցեանցն ըսած  
է որ Սիմոն՝ Նալբանի դպրոցին աշակերտած ըլլայ: Դիւանի  
Արժ. հրատարակիչը կը հերքէ աս պարագան եւ վաւերական  
աղբիւրով մը կը հաստատէ թէ Սիմոն “յատուկ աշա-  
կերտ էր” Յովսէփ Ապրաքաթեան վարդապետի եւ Շամա-  
խեցի Յակոբ Գիթնախան վարդապետներու մօտ: — Սիմոնի  
կաթողիկոսութիւնը տեւեց 1763 Ապրիլ 20 — 1780 Յու-  
լիս 26 (Տես Դիւան գիրք Գ. էջ կգ—կե):